ՇՐՋԱՆ 1874 Բ. ՕԳՈՍՏՈՍ 29 ՀԻՆԳՇԱԲԹԻ Ն. Տ. ՍԵՊՏԵՄԲԵՐ 10 ԹԻՒ 96

ԱՍԻԱՆ ամեն օր կը հրատարակուի բաց ի կիւրակէ և տօն օրերէ ։

Խմբագրոյս գրասենեակըն է Կ. Պոլիս, Սուլթան Համամ խասա էֆէնտի խան միջնայարկ Թիւ 11 ։

Բաժանորդագինը կանխիկ չը վճարուած թերթ չը ղրկուիր գաւառները ։

Ծանուցման տողը 2 ղրշ.

ԱՍԻԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ
Կ. Պոլսոյ համար
Տրկն. (300 Թիւ) 90 ղր.
Երկմս. (50 Թիւ) 15 »
Գաւառաց համար
Տրկն. (300 Թիւ) 6 մճ.
Վցմս. (150 Թիւ) 3 »
Եռմս. (75 Թիւ) 1 1/2 »
փօստային ծախքը մեր վրայ է ։

ՁԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

10 ՓՐ. ԼՐԱԳԻՐ 10 ՓՐ.

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԱԶԳԱՅԻՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

(Տես. Տե. Թի. 95)

Ցաւալի է արդարև որ Նորընտիր Ս. Պատրիարքըն այսպիսի փաստաբաններ ունի ։ Ասոնց գովեստը թոյն մ'է որ անզգայօրէն կ'սպաննէ, ախտ մ'է որ մարդուս թմբիր կ'ազդէ և ցնորական աշխարհ մը կը տանի, ո՛ւր մարդ կ'երազէ ինչ որ արժանութեան ատենն ունէր թերևս մեծ խորհուրդներ իրագործելու ։ Կ'երևի թէ Ս. Պատրիարքըն այս խորհրդոց կատարման առաջին պայման համարեց Ընդհանուր Ժողովոյ մէջ համաձայնութիւնն և աջ ու ձախ կողմի պարագլուխներն խնճոյքի հրաւիրեց և հաշտութեան յորդորեց ։ Բայց հացն ու գինին չեն կարող երկու տարբեր տարրեր շաղկապել, և մէկ անուամբ մկրտել, և Ս. Պատրիարքին երևոյթական հաշիւը ծուռ էր, միայն թէ ուրիշ հաշիւ մը չունենար ։ Ինք Ընդհանուր Ժողովէն գրեթէ միաձայնութեամբ ընտրեցաւ, ուստի իր աթոռն աւելի ամրապնդելու համար առ այժմ պէտք չունէր երկու կողմն ալ իրեն կապել, եթէ կապել էր միտքը, և ոչ իրաւունք՝ համամտութիւն մը գոյացնելու ջանալ այն տեղ ուր զանազան խնդիրներ զանազան կարծիք պիտի ունենային վիճաբանութեամբ ։ Միայն Ատենապետին զանգակին գործն է 'ի կարգ հրաւիրել անոնք որ անկարգ կերպով կ'վիճաբանին և իրար կ'թշնամանեն ։ Բայց յուլիսի 6ին, զանգակն ալ երիցագոյն Նորընծայ Ատենապետին ձեռքէն ընկաւ, իր միակ զէնքն, և պուէտն չունեցաւ այն արիութիւնն որով ուրիշ կերպ մեծ պուէտ մը, 1848ին՝ կատաղի ժողովրդեան մը կոհակները խաղաղցուց և իր լանջին ուղղեալ հրացաններու կրակը մարեց իր վեհ և ճարտասան ձայնովը՝ Փըրանսայի ազգային ժողովին մէջ ։

Ի հարկէ մեծ մարդիկ փոքր պարագաներու մէջ կ'պզտիկնան, պզտիկները կ'մեծնան ։ Միսաքեան էֆէնտին յուլիսի 5ին իր բնական տեղը չէր, և փոթորիկին իշխելու անպատրաստ ։ Բայց ժողովուրդն ի՞նչ կ'ուզէր այն օրը ։ Միթէ գաղղիացւոյն պէս կարմիր դրօ՞շ թէ ոչ Լեհաստանի ազատութիւնը կը խնդրէր, ո՛չ. քան զայս կարևոր բան մը. Ս. Փափազեանի անկումը, չորս հազար ստորագրութեամբ ։ Ուրեմն Փափազեան էֆէնտին անձ մ'է եղեր, այժմ պաշտօնական շրջաններուն [illegible] է, Կ. Պոլսոյ հայոց մեծ մարդն է, Արման Մարան է ։ Իր յատուկ [illegible] ունի նա, ինչպէս կ'ըսէ Ռուսիաբնակ Հայն իր անհայ ոճով ։ Թիկնապահներ, լրտեսներ, սէյիսներ չեն պակսիր իր Նպատակին, որ է Սահմանադրութիւնը պահպանել անսահմանելի միջոցներով, և Խրիմեանը հարուածել, այն Խրիմեանն զոր երբեմն ժողովուրդը քերովբէից կարգը կ'դասէր ։ Անհանդարտ և անսաստ բնաւորութիւն, ժիր գլուխ, շարժուն միտք և լեզու, յամառ տկարին առջև, քծնող զօրաւորին դէմը, Ս. Փափազեան էֆէնտին այլ և այլ ճամբաներով ժողովրդականութեան հասաւ ։ Երբեմն հոլովներու ուսուցիչ՝ յոլովակի դեր խաղաց ազգին մէջ ։ Մերթ խմբագրի, երբ Արևելեան պէյէն կ'ներշնչուէր, մերթ պատմաբանի, երբ վէննացւոց Հայոց պատմութիւնը թղթատելով կ'րտնաքաղէր, և Պերպերեանի ժամանակակից պատմութիւնը կ'խնկարկէր, մերթ Ուսումնական խորհրդոյ անդամի՝ երբ աստուածաբան Չամուրճեանէ դաս կ'առնուր, պաշտօն վարած և հուսկ ուրեմն ազգային գործոց հմտութեամբն Երեսփոխանական ժողովին ծոցն ընկած է ։ Այնուհետև իր փառասիրութիւնը չափ չճանչեր, կերպ մը պերճախօսութեամբ անուն կ'առնու և ուշ կը գրաւէ ։ Այնպէս կ'համոզուի որ եթէ ազգային ժողովներէ քաշուի, ազգին յոյսն ու արևը պիտի մարին, ուստի իր գործառնութեանց կեդրոն ընտրելով Ղալաթիոյ Թաղական խորհրդարանը, ո՛ւր տասն տարիէ վեր պաշտօն կ'վարէ այս [illegible] սահմանադրականը, իրեն յատուկ խումբ մը կազմելու կ'նկրտի որպէս զի վտանգի ժամանակ իրեն թև և թիկունք լինի ։ Ամէն դաւադրութեան մէջ՝ իբրև դաւադիր կը բամբասուի, սակայն ինք եղի պէս երես կ'ելնէ. ճարպիկ է, և յանդուգն. չորս դին գործիքներ կ'փնտռէ ։ Զօրութիւն մը կ'սեպէ իր գրիչը զոր 'ի ծածուկ կ'գործածէ, և իր փառքն են անհատնում [illegible] ։ Այս [illegible] էֆէնտիին նշանաբանն է իշխել, և այս իշխանութեան միայն [illegible] կ'պակսի, որով նախ Խրիմեանի գլուխը պիտի առնուր անշուշտ, և ապա սև գլուխներէ հաւատաքննութեան ատեան մը կազմելով ամէն ազատաշունչ խօսք, կարծիք և գլուխ պիտի հատանէր ։ Փափազեան ազգին խիստ օգտակար մէկ անդամը պիտի դառնար եթէ 'ի վաղուց վատառողջ մ'Էնկըրտի մէջ չմնանէր ։ Բայց այսօր դարձեալ ազգը կ'կառավարէ, և Ս. Պատրիարքին նեցուկն է, Ընդհանուր Ժողովոյ ատենադպիրն, ընտրեալն է ։ Ո՞վ կըրնայ տալ դէմ բան մ'ըսել ։ Բայց ազգային մէկ մասին այս ընտրութիւնն անհաճոյ թուելով բողոքագիր կ'տան Ս. Պատրիարքին, որ անոր իմաստը գուշակելով կ'ժպտի. ժպիտ՝ որ կ'նշանակէ, «Ժողովուրդ, ընդհանուր ժողովոյդ վճռին դէմ չարժելու իրաւունք չունիս։» Բողոքագիրը բընապէս Ե—Ե—ւ ատենադպրին կ'հաղորդուի որ ըստ այնմ պատասխանը պատրաստէ։ Բայց կ'ըսեն թէ ճարպիկ ատենադպիրն արդէն իր պատասխանը պատրաստեր, կարդախօսն իր Թիկնապահներուն հաղորդեր էր։ Իսկ Նորընծայ ատենապետ էֆէնտին նոյն պահուն Պառնասի գագաթն էր, և վարն անցածը չէր տեսներ, այնպէս որ երբ բողոքարկուներու գոռում գոչումք կ'սաստկանայ՝ Ատենապետ էֆէնտին Մուսայից լեռէն վար կ'իջնէ, աչքը կ'շփէ և կ'հարցնէ թէ ժողովուրդն ի՛նչ կ'ուզէ։ Երբէք հանճար մ'այսպէս միամիտ չէր գտնուած թէև հանճարներու յատուկ մէկ բնորոշելին է միամտութիւնը։ Ատենապետ՝ էֆէնտին՝ Իփէկճեան էֆէնտիին հարցման պատասխանելով բոլորովին ագէտ կ'ձևանայ բողոքագրին վրայ։ Երբ ձայներն աւելի կ'բարձրանան՝ ատենադպիրն իր աթոռէն իջնել կ'ուզէ, Ս. Պատրիարքը կ'վրդովի. կը հրաւիրէ որ դիւանն իր պաշտօնը չարունակէ և կրօնական ժողովոյ ընտրութիւնը կ'կատարուի։ Նոյն միջոցին մշեցիք կ'խոյանան, մեծ կռիւ և ամէն կողմէ ծեծ մը կ'սկսի, ոստիկաններ կ'գան և ատենադպիր էֆէնտին յաղթանակը կ'տանի։ Ահա յուլիսի 5ի դէպքն որու ծանրութիւնը գլխաւորապէս դիւանին վրայ կ'մնայ։ Վասն զի եթէ բողոքարկուներ իրաւունք չունէին աղմուկ հանելու ընդհանուր ժողովին մէջ, իրաւունք ունէին որ և է խնդրոյ մասին բողոքելու։ Ամէն բան կը խաղաղէր եթէ դիւանն իմացնէր միայն որ բողոքը նկատողութեան պիտի առնուի։ Բայց դժբաղդաբար դիւանը կ'մրափէր, քանի մը խռովարար մշեցիներ 'ի մարտ կ'պատրաստուէին դուրսը, և Ս. Պատրիարքն իր ներկայութեան վրայ շատ կ'վստահէր։

Քանի մը տարիէ 'ի վեր ստորերկրեայ կուսակցութեան մը խաղացած խաղին երրորդ արարուածն է այս։ Ըստ երևոյթին՝ վախճանն ընդ. ժողովոյ ցրուումը պիտի լինի։ Արդէն շատ մ'երեսփոխաններ հրաժարական տուած են, վասն զի ասոնք լոկ բարոյական պաշտօն մը ունին խորհրդարանին, և ոչ թէ բիր ու մտրակ։ Այս է անխորհուրդ ընտրութեան պտուղը։ Փուէտիլին բոլորտիքն ընտրողները ցանցառ են. և երբ ընտրեալն երևան գայ, անտարները կ'արթննան և բողոքելու կ'ելլնեն. Ինչ անհեթեթ ընթացք։ [illegible] որ սովոր է ամէն բանի սիրած գոյնը տալով պատմել, այս խռովութիւնն Խրիմեանի գլխին տակէն կ'կարծէ, և երբեմն խնկարկած ժողովուրդն այսօր սինլքոր կ'անուանէ։ Բայց դերասանները բաւական են հաստատելու որ խռովութեան պարագլուխները ո՛յք են։ Անհրաժեշտ հարկ է ազգին բարձրագոյն կոչուած ատեանը զտել, մաքրել և քուէարկուներուն պարտքն՝ իրենց զգացնել։ Ազգին լրջամիտ և խոհական մասն պէտք է որ ասպարէզ իջնէ՝ անտարբերութիւնը թօթափելով և չար կողմէ սպառնացող վտանգին առաջն առնու։ Յետադիմական շարժում մը կը տեսնեմ այս տեղ, որ մեզ կրօնական միաբանութեան տանելու կը նըկրտի։ Այս շարժման հեղինակն ո՛վ է գիտես, գիտես թէ ո՛ր տեսակ մարդիկ կ'գործեն այժմ. ասոնց սկզբունքն է. «Եկեղեցական մարմին եկեղեցին է, ո՛վ որ եկեղեցական մը ('ի բաց առեալ Խրիմեանն անշուշտ) կ'զարնէ, եկեղեցին կ'զարնէ։»

(Շարունակելի)

Ի Վան 29 յուլիս 1874

. . . Խմբագիր Ասիա Լրագրոյ,

Ասկէ յառաջ Ձեր անաչառ թերթերէն միոյն մէջը, «Երիտասարդութիւն Վանայ» ստորագրութեամբ հըրատարակուած նամակին միջոցաւ, Վանայ Պօղոսեանց անօրէք կատաղութիւնը խածանող կենդանիներու նըմանցունելնիս 'ի զուր չէր, այլ խիստ դիպողաբար և 'ի ճահ կշռեալ, և որովհետև նոյն փոքրոգի . . . սովորութիւնն է, իրենց դէմ արձակուած քարերը կատաղաբար խածանել, և զինքն թողլով, դէպ ի միւսն վազել։ Սակայն գիտնալ պէտք է որ, դոցա ակռաները խլպառ փշրելու արժան է։

Ահա՛, ինչպէս որ ; այս անգամ այն վատ էակներէն երկուքը, իրենց ակռաներուն արձակուած քարերը թողուլ, և անձնականի յարձակումը տալ ժպրհեր են ; Նախ ուրեմն պատմեմք դոցա ինչ ոգւոյ, ինչ սրտի, ինչ արժանեաց, և ինչ նշանակութեան տէր ըլլալը, հապա անցնիմք խնդրոյն։

Մինն է՝ Ցովսէփ Սօլախեան (կամաչեմք ասել վարդապետը) որն որ երբեմն Լիմ անապատի կուսութեան ակամները փորող խլուրդն էր, և որ անցեալ տարիները, իւր պատիւը և միանգամայն մօրուքը 'ի պահեստի դրած . . . և լաւ համարեցաւ Վանայ Լէզք գիւղի քարանձաններու մէջ Շամիրամայ պաշտած յարալէզ Աստուածոյն պաշտօնը մատուցանել, քան զանապատի կեանս (ընդ որ ստրջացեալն էր 'ի վաղուց) բայց գեղացւոց հալածմունքէն ստիպեալ, վերստին ծնօտ կապած ամօթալից խոյս տուաւ յանապատն։ Իսկ միւսն է, Վանայ հանրածանօթ բադոսաքուրին, ամբարիշտն, մականուանեալ փեօլօղն, և դուռողն, որ յառաջ Ս. Երուսաղէմայ վանքին մէջը կուսութեան ուխտող Մարկին մի է եղեր, և երբ իւր ուխտին դրժելով դէպի իւր հայրենիք կուգայ, Երուսաղէմայ անօթները յափշտակելով, կ'բերէ 'ի կ. Պօլիս կ'վաճառէ, և գալով 'ի Տարօն, Աշխար օվասի գիւղէն մի պոռնիկ կնոջ կապէնք կուտայ, և իւր հետ կը բերէ 'ի Վան, և երբ Վանայ Տաճիկները ևս կսկսին յաճախել առայդ կինը, նորա անհարազատ փեօլօս այրն, ճարահատեալ կ'տանի «'ի պոռնկի մահուն» բռնած տեղը, և անդ անհետացնելով զանի կը դառնայ։ Այս է նաև Վանայ գիւղացւոց Պօղոսեան լիազօր պաշտպանն, և իբր զԴիոս չԱստուածն բարձրացնող . . . և միթէ, սա այն ամեհի գազանն չէ՞ որ, որջանալով Նորաշինու դպրոցին մէջը, 25 տարիէն 'ի վեր ազգին մատաղ մանուկները, անկիրթ, և խպառ անուս թշուառ վիճակին մէջ թողլով, կարծակէ և որ մեծն է, Վանայ մէջ երկպառակութեան, ազգամատնութեան և կուսակցութեան դերերը կը խաղայ, որոյ արարքը ստուար էջերու կ'կարօտի թէև, բայց հոգով ծածկելու է այդ ապականութիւնը . . .

Ահաւասիկ ասոնք են, տէ՛ր, այն վատ էակները, որք այս օրերը, «Խրիմեան և իւր գործք» անունով մի տետրակ 'ի հրապարակ հանին, որ իրենց խակ մտքով իբրև հերքում մի է Պօղոս վարդապետի ամբաստանագրոյն, բայց ճշմարտապէս խօսելով, անոր կ'նմանի, որ երբ անառակ և անուանարկ մարդիկ ուրիշ փաստ և ապացոյց չգտնալով, իրենց դէմ իրաւամբ բողոքողներուն կըսեն, թէ դուք չէ՞իք, որ այս ինչ տեղը այն ինչ օրը այսպէս և այնպէս գործեցիք, իրենց սատանածին երևակայութեամբ՝ խիղճն դէպք մի կ'ստեղծեն, կ'իրականացնեն, և մարմին կուտան։ Թող լո՛ւ աշխարհը, թող քննէ, բայց թող չզարմանայ, քանի որ Խրիմեանի արդարութիւնը, և անմեղութիւնը կոթողի նման բարձրացած է աշխարհի առջև, դորա համար պէտք է հայուին, պէտք է մաշուին, պէտք է ղօղանջեն, պէտք է կաղկանձեն այդ խաւարասէրները . . . ։ Այս է առաքինեայ բաժինը, այս է աւետարանական խաչն, այս տեղն է հաստատուած այն ձգողական մագնիսը, որ Ցիսուսի Աստուծոյ տուած այն վսեմ երանութիւն յինքն կորզէ։

Իսկ դու առաքինութեան կենդանի Նահատակի ո՛վ բարձր Սրբադնութիւն, կ'լսե՞ս ասոնք․ այո՛, կ'լսես, և ծաղր կառնես իբրև հաստարմատ կաղնի, կը քամահես իբրև մեծ անձն, կը համբերես իբրև փիլիսոփայ, Սոկրատէսի դէմ եղած անզգամութիւնները և լրբութիւնները քու դէմդ ալ եղած են այս օրերը։ Իսկ դու 'ի վեր քան զՍոկրատ, գիտես որ այսչափ մրրկէ և գոռալէ զկնի, բնականաբար անձրև պէտք է տեղայ։ Աշխարհը կը սրտմտի, սրդարասիրաց ոգիսը կը դառնի, ոմանք սուտը կ'շողոցնեն, ոմա՛նք անէծք կ'կարդան, իսկ դու ունիս առնես քու բարեկամացդ և թշնամեացդ իրարանցման վրայ։

Ա՛հ, սիրելի Հայրիկ, եթէ քաջալերանաց կարօտ լինէիր, աշխարհ ամէն քեզ քաջալերս պիտի կարդայր, այդ նահատակութեան անձուկ ասպարէզին մէջ։

Բայց փոխանակ քաջալերս տալու, կ'մնայ աշխարհի հրահանգ առնուլ, և ուսանել այդ ձեր վեհանձն օրինակէն թէ ինչպէ՞ս տանելու է վշտաց, և ինչպէ՞ս կրօնքին ուժով յաղթելու է թշնամեաց։

Այո՛, տարար դու շատ վիշտերու․ վիշտս 'ի ծովու, վիշտս 'ի ցամաքի, վիշտս յազգատոհմէ․ վիշտս 'ի վարդապետութեան, վիշտս 'ի Պատրիարքութեան, մանաւանդ վիշտս 'ի սուտ եղբարց . . . ։ Բայց սնոտրակոյս ժամանակն, որ ապագային ծնողն է, իւր անմահութեան թերթերով պիտի անմահացնէ ձեր այդ վիշտերը, և թէ որ 'ի կենդանութեան ձեզ դէմ մախացողներու մաքառնին չունին յաջողեցաւ օձի պէս սողալ, և պարզամիտները գայթակղեցունել, բայց յետ մահու ձեր աճիւնին մէջ պիտի փայլի մի փառաւոր և վսեմ անմահութիւն . . . ։

Աղնիւ խմբագիր, վանայ երիտասարդութեան արդարայի ձայնին արձագանք տուած կըլլաք, սոյն հատուած Հայաստանի ձայնովդ կարդալով։

Ձեզ երախտապարտ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ ՎԱՆԱՅ

Աւելորդ չեմք համարիր ասել թէ «Խրիմեան և գործք իւր» վերնագրով հրատարակեալ տետրակին հեղինակները սոյն նամակին մէջ յիշուած մարդոց կարգէն են ահա։

ԱԶԴԱԳԻՐ

ԱԶԳ․ ԿՐՕՆ․ ԺՈՂՈՎՈՅ ԴԻՒԱՆԱՏԱՆ ԿՈՂՄԷՆ

Ազգ․ կեդրոնական վարչութեան կրօն․ ժողովոյ կողմէն 'ի հրատարակութիւն զրկուած որոշմանց ԺԲ․ յօդուածին «Հայաստանեայց եկեղեցւոյ և կաթողիկէ եկեղեցւոյ» բառերն պիտի լինին՝ «Հայաստանեայց կաթողիկէ եկեղեցւոյ»։

27 օգոստոս 1874

ԱԶԳ․ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՆՑԻ ՊՕՂՈՍԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Կը լսենք թէ վանցի Քիւրտ մը՝ Վանի բնակիչ Պօղոսը կառավարութեան առջևը դատի հրաւիրած է։ Պօղոս յիշեալ Քիւրտին կինը ծեծեր և տակաւին մօրը արգանդին մէջ գտնուող երեխայի մը մահին պատճառ եղած է եղեր։

Մեր միտքը բացատրել չէ հոս թէ Քիւրտի մը վրայ այսպիսի բռնութիւն բանեցող անձ մը ինչպիսի մտերիմ յարաբերութեան մէջ գտնուելու է Քիւրտ պէյերուն հետ և թէ խեղճ ու անպաշտպան Հայերուն գլխուն ինչեր չը կընար անել։ Մեք ալ այժմ մի քանի խօսք կ'ուզեմք անել միայն այն լուրին վրայ զոր Լըրագիրներէն ոմանք հրատարակեցին թէ Ազգ․ վարչութիւնը խնդրե՛ր է Բ․ Դուռնէն որ Քիւրտին Պօղոս բնակչին դէմ բացած դատը ինքը տեսնէ։

Կը գանգատիմք երբեմն թէ Պատրիարքարանի թագրիրներուն ազդեցութիւնը կոտրած է կառավարութեան առջև։ Արդարութիւնը կը պահանջէ ասել որ երբեմն մեր Պատրիարքարանը այնպիսի ընթացքներ կը բռնէ որ իւր ձեռօքը ազդեցութիւնը կը տկարացնէ։ Քաղաքագիտական մեծ սխալ մ'էր մեր Պատրիարքարանի այդ խնդիրը որուն անշուշտ բացասական պատասխան մը պիտի տրուէր։

Վարչութիւնը այսչափ բան մը չէ՞ր զգար կանխաւ, չէ՞ր գիտեր որ Քիւրտը չ'ընդունիր Բ․ Դուռը թողլով մեր Պատրիարքարանը դալ դատուիլ։ Չ'ենք կրնար ասել թէ չէր գիտեր, բայց չե՛նք կրնար նաև մեկնութիւն մը տալ թէ ինչո՞ւ գիտնալով հանդերձ այդպիսի անպատեհ առաջարկութիւն մ'անէ կառավարութեան։

Պէտք է գիտնալ որ կղերական ատեանը հրեշտակ ասել չէ, քանի որ նա մարդ ըլլալէն դադրած չէ, քաղաքացի է, երկրին քաղաքական օրինաց ալ ենթակայ է։ Եկեղեցական գործոյը համար եկեղեցիին պատասխանատու, իսկ քաղաքական գործոց համար ալ քաղաքական իշխանութեան պատասխանատու է։ Սոյն հակառակը Պապական դրութիւն է։

ՖՐԸՆԿԵԱՆ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԵՆԷՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՎԱՍՏԸԿՈՂ ԹԻՒԵՐԸ

(Շար․ տես թիւ 95)

1183 1198 1199 1202 1213 1217 1233
1241 1252 1257 1278 1287 1292 1297
1340 1371 1393 1410 1419 1439 1448
1461 1462 1539 1540 1565 1575-1596
1599 1629 1651 1679 1704 1705 1710
1731 1741 1796 1810 1880 2013 2016
2037 2081 2107 2121 2143 2167 2171
2182 2193 2194 2217 2266 2299 2302
2309 2349 2356 2392 2403 2420 2433
2466 2502 2523 2529 2551 2556 2557
2564 2619 2635 2640 2656 2662 2706
2711 2718 2826 2848 2875

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Պէրլին 8 սեպտեմբեր

Պիլպաօէն եկած մասնաւոր հեռագիրներ՝ կ'իմացունեն թէ Գերմանական Թնդանօթակիր նաւերը Գարլոսեաններէն գրգռուելով Կուէթարիայի վրայ ռումբեր արձակեր են։

Օտեսա 8 սեպտեմբեր

Կայսրը այսօր Նիքօլաիէֆ հասաւ։

Միլանի իշխանը մօտերս Զուիցերիայի մէջ Կորչագօֆ իշխանին պիտի այցելէ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեծ ծովապետութեան (Գափտան փաշալըգ) պաշտօնը որ Մէհմէտ Ալի․ փաշային մահէն վերջը բարձուած էր, վերստին հաստատուելով, Գոյսէրլի Վսեմ․ Ահմէտ փաշային յանձնուեցաւ։

Նորին վսեմութիւնը յիշեալ պաշտօնին բարձրացունող «մենշուր»ը այսօր կամ վաղը պիտի կարդացուի մեծ հանդէսով, և Բ․ Դուռը գացած ատեն թնդանօթներ պիտի արձակուին։

—Երեքշաբթի օր բարձր Մեծ Եպարքոսը և Ելեւմտից պաշտօնեայն երկար տեսակցութիւն մ'ունեցան վեհափառ Սուլթանին հետ։

—Պարսից դեսպան Վսեմ․ Մօհսին խան Գուրճէշմէի Յունաց եկեղեցւոյն 10 Օսմ․ ոսկի նուիրեր է։

—Վեհափառ Սուլթանին բարձր պաշտպանութեանը տակ մօտերս ձիարշաւի հանդէս մը պիտի կատարուի Գատըգիւղի մօտ Ուզուն չայիրի դաշտավայրը։

—Այտընի գաւառին արտաքին Թղթակցութեան դիւանին տնօրէն Տիրան էֆէնտիին Գ․ կարգի Մէճիտիէ պատուանշանն շնորհուեցաւ։

—Երեքշաբթի օր բարձր Մեծ Եպարքոսն և հասարակային շինութեանց վսեմ. պաշտօնեայն Բերա երթալով, Բէշէլին աշխատութիւնները անձամբ աչքէ անցուցեր և շոգեշարժ մեքենայներուն փորձերը անել տալով, գոհ սրտով մեկներ են։

—Չենկերի բնակիչներէն մի օրիորդ առևանգուածէ մի քանի օրէ հետէ։ Կ'ասեն թէ առևանգիչը դրացիներէն ամուսնացեալ մարդ մ'է որ երեք զաւակաց ալ հայր է եղեր։

ԴՐԱՄԱԿԱՆ

Կ. ՊՈԼԻՍ ՕԳՈՍՏՈՍ 23

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

Ըստ. ոսկին 100 ղուրուշի հաշւով

	Ղրշ.	Փրյ.
Անգղ. ոսկի	109	12
Գաղղ. ոսկի	87	10
Բօլ	89	15
Գրըմից	51	24
Ճերմակ մէճիտ տարբ.	101	20
Հինգնոց	104	30
Մէթալիք	104	20
Պղինձ	127	20

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂԹՈՑ

Քնդհ. պարտ. Արժ. բաց	49 05	
բարձր գին	49 14	
ցած «	49 2	
«կէս օր» գոց	49 06	
Փոխառութիւն 63ի	333	
» 65ի	335	
» 69ի	281	
» 72ի	80	1/2
Քրէտի ճէնէրալ	9—35	
Սօսիէթէ ճէնէրալ	7—07	
Սօսիէթէ Օթօման	4—18	
Կ. Պօլսոյ Պանգային	5	
Րումէլիի երկա. Արժ. հին	114	
» » » նոր	87	3/4
Թրամվէյ «անկտրօն»	530	

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՊԷՏՍ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

Ի Գ. ԱՍԼԱՆԵԱՆԷ

Աշխարհի այլ և այլ մասերուն՝ մանաւանդ Եւրոպիոյ մէջ վերջին տարիները պատահած քաղաքական փոփոխութիւններին՝ հայերէն նոր աշխարհագրութեան մը պէտքն զգալի ըրած էին։

Այս կարևոր պէտքը լիովին լցուցած է սոյն ընտիր աշխատասիրութիւնը, միանգամայն Թուրքիոյ վրայ ալ ընդարձակագոյն տեղեկութիւն տալով, որ ուրիշ աշխարհագրութեանց մէջ կը պակսէր, և որոյ պէտքն ալ զգալի էր։

Կը գտնուի Մէրճանը Պաղտասար տղայի գրատունը և այլ գրավաճառաց քով։ Գին 2 1/2 ֆրանք։

Ա. ՏԸՊԷԻ

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՔ
ԾԱԾԿԵԼՈՑ
ԿԱՄ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԹԱԳՈՒՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

Որ ի նախնի ժամանակաց հետէ
մինչև ցայսօր

Թարգմանեաց
Ն. ՃԻՎԱՆԵԱՆ

ՏԵՏՐ Ը.

Թերթ առ թերթ կը հրատարակուի շաբաթը մի անգամ՝։ Ցերորդ տետրն ալ հրատարակուեցաւ։ Կը ծախուի ամեն գրավաճառներու քով և կամուրջի գլուխն պարագան 40 փրյ. գինով։

ՀԱՏՈՒԱԾՔ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՔԱՂԵԱԼՔ ՅԱՐԱԲԱՑԻ ՊԱՏՄԱԳՐԱՑ

Ի ՁԵՌՆ ՏՈՔԹՈՐ ՄՈՐԹՄԱՆԱՅ
ԱՐԵՒԵԼԱԳԷՏԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ Ի ՀԱՅ

ԿԱՐԱՊԵՏ Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆ

ՏԵՏՐ Ա.

Արևելեան պատմագէտներէն հռչակաւորն Տօքթոր Մորթման Գերմանացին՝ որ վանի սեպագիրներուն մասին արած յայտնութիւններովը և մեր ազգային պատմութեան մատուցած ծառայութիւններովը այնչափ հռչակաւոր հանդիսացած է, ահաւասիկ մի նոր գիրք ալ հրապարակ կը հանէ արաբացի պատմագիրներէ քաղելով, որով մեր ազգային պատմութեան ինչ ինչ աղօտ կէտերուն վրայ նոր լոյս մ'ալ սփռած կը լինի։

Երբ նոյն իսկ օտարազգի մը մեր ազգային պատմութիւնը այնչափ կը սիրէ որ իւր կեանքը զայն հետազօտելու կը նուիրէ և իւր ծանր աշխատութեամբք ստացած տեղեկութիւնները կը ներկայացունէ մեզ որ դիւրով վայելեմք ըղձոսա, որչափ դատապարտելի կը լինի մի Հայ երբ անտարբեր մնայ այդ գիրքէն ունենալու իւր թանգարանին մէջ։

Շնորհակալ եմք Մեծ. Տօքթոր Մորթմանէն և Իւթիւճեան էֆէնտիէն որ այսպիսի հետաքրքրական և կարևոր գիրք մը Հայ մատենագրութեան մէջ աւելցուցին։

Գինն է 1/4 արծաթ մէճիտ։ Կը գտնուի կամուրջի գլուխն պարագան։

ՍՏՈՒԵՐՔ ՀԱՅԿԱԿԱՆՔ

ՔԵՐԹՈՒԱԾՔ

Ի ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ ՆԱՐ—ՊԷՅ

Գեր. Խորէն սրբազանին բանաստեղծական հանճարը ոչ միայն մեր ազգին՝ այլ և օտարազգաց ալ քաջածանօթ է, Վարդենիք ու Քնար Պանդխտին իւր քերթուածները դարուս Հայ գրականութեան ամենէն նշանաւոր գործերէն ըլլալը կը վկայեն բանասէրք։

Այն հատորներուն գտած սիրալիր ընդունելութենէն քաջալերուած մենք ալ փափաքեցանք հրատարակել գեղեցիկ տպագրութեամբ ու ընտիր թղթով Ստուերք Հայկականքը, որ աշխարհաբառ լեզուով ըլլալով, ու նիւթերն ալ բոլորովին ազգային, մեծ յոյս ունինք որ առաջիններէն ալ աւելի ախորժելի պիտի ըլլան, իրենց անուշ ու դիւրահասկանալի լեզուովն ու սրտաշարժ ու վառվռուն ոճովը։

Մեծ. Ռուսինեան էֆէնտին այս գրքին մէջի քանի մը երգերը կարդալովը, վկայած է թէ արցունքը չէ կըրցեր բռնել։ Ու Հայկ անունով երգին համար ալ ըսած է թէ «Հայր Ալիշէնի Հայկ դիւցազներգութենէն շատ աւելի կարժէ։»

Ստուերքը կը ծախուի մեր քով. գինն է կէս արծաթ մէճիտ։

Գավաֆեան եղբարք
Գրավաճառք և Տպագրիչք

ՊԱՅԼԻՆ ՄԱՐԱՋԱՒՏԻՆ
ԴԱՏԱՍՏԱՆԸ

ՀԱՏՈՐ Բ. ՏԵՏՐ Ջ.

Այս հետաքրքրաշարժ գիրքին Ա. հատորը աւարտած լինելով, Բ. հատորն ալ տետր առ տետր կը հրատարակուի։ Մէկ տետրին գինն է 40 փր։

ՏԷՐ ԼՐԱԳՐՈՅ ՅՈՎԱԿԻՄ Գ ՐԷԻՍԵԱՆ

ՏՆՕՐԷՆ ԽՄԲԱԳԻՐ
ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ